

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի ուղերձը Ուսանողների միջազգային օրվա կապակցությամբ

17.11.2014



Միրելի ուսանողներ,

Սրտանց շնորհավորում եմ բոլորիդ Ուսանողության միջազգային օրվա կապակցությամբ: Նոյեմբերի 17-ը ողջ աշխարհում նշվում է որպես Ուսանողների համաշխարհային օր, իսկ մի շարք երկրներում այն նշվում է նաև որպես երիտասարդության համախմբման ու միասնականության օր:

Ձեզ մաղթում եմ հաջողություններ, աշխույժ և ակտիվ ուսանողական կյանք, խորը և կայուն գիտելիքներ, քանզի մասնագիտական աշխատանք ձեռք բերելու ճանապարհին մրցունակ գիտելիքների առկայության դեպքում միայն կարող է ապահովված լինել աշխատանքում լավագույնս դրսևորվելու հնարավորությունը: Որպես կանոն ուսանողները նաև իրենց ժամանակի հասարակական կյանքի ակտիվ մասնակիցներն են լինում, քաղաքացիական հասարակության ձևավորման առաջամարտիկները: Ուստի լիահույս եմ, որ վայոցձորցի ուսանողները, որոնք մեծ ավանդ և ակտիվություն ունեն մարզի հասարակական կյանքում, այսուհետ նույնպես լինելու են մարզային բոլոր ձեռնարկումների մասնակից, ինչու չէ, նաև խաձեռնողներ:

Միրելիներս Վայոց ձորի վաղվա լուսավոր օրը և ապագան պայմանավորված է նաև Ձեզանով:

Մեկ անգամ ևս շնորհավորում եմ մայրաքաղաքում և մարզում գործող ԲՈՒՀ-երի և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորող վայոցձորցի բոլոր ուսանողներին Ուսանողների միջազգային օրվա կապակցությամբ, մաղթում՝ կամք, ուժ ու եռանդ, ուսման մեջ հաջողություններ ու հաստատակամություն նպատակների իրականացման ճանապարհին: